ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հուլիսի 2025թ. թիվ 335-Ա

ՀԱՄԼԵՏ ԽՈՒՄԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հաշվի առնելով Հ.Խումարյանի 03.07.2025թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու՝ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքից անհարգելի բացակայելու և ՊՈԱԿ-ի կանոնադրության 49-րդ կետի պահանջները խախտելու, այն է՝ լիազորված մարմնի հետ կնքված պայմանագրի պահանջների ոչ պատշաճ կատարելու համար, «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Պուշկինի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Համլետ Խումարյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Նաիրա Բարիկյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

08/07/2025

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2025թ. հուլիսի 8
ք.Վանաձոր